

# ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Եթէ հետինները չուզէին ի գործ դնել առաջիններէն լսածն ու տեսածը, այժմ նախնիներու ժառանգներէն յաջորդութեամբ հասած օգտակար ոչինչ չէր ըլլար: Արդարեւ, երեխաները պիտի հնազանդին հմուտներուն՝ սորվելու ամէն հարկաւոր բան՝ թէ՛ գիտութիւններու, եւ մանաւանդ բարոյականութեան, որպէսզի կարողանան կեանքի ընթացքին անսխալ քայլել եւ տառապանքի հովիտէն բարի եւ անվարան դուրս գան:

Հնազանդիլ Աստուծոյ, ծնողներուն, ուսուցիչներուն, իմաստուններուն եւ ծերերուն, դեկավարներուն եւ առաջնորդներուն, ոչ միայն գրաւոր շնորհական օրէնքին պահանջն է, այլեւ բնական օրէնքին, որովհետեւ մարդիկ տգէտ ու անդաստիարակ կը ծնին յետոյ կարիք կ'ունենան գիտուններէն սորվելու եւ խնամակալներէն դաստիարակուելու: Ուրեմն ով որ անոնց չհնազանդիր՝ չարաչար կը մեղանչէ եւ արժանի է պատիժի:

Արտաքին կերպարանքով ու բերանի խօսքով ոչ ոք իրեն Աստուծոյ անհնազանդ ցոյց չի տար, բայց սակաւ կարելի է գտնել գործով հնազանդներ: Իսկ Աստուած ոչ թէ խօսքերուն կը նայի, այլ գործերուն: Ուրեմն՝ ով որ կ'ուզէ իմանալ, հնազանդի Աստուծոյ կամ ոչ՝ թող քննէ իր գործերը: Եթէ Աստուծոյ օրէնքին համաձայն են՝ հնազանդ է, իսկ եթէ ուրիշ կերպ են՝ թող իմանայ որ անհնազանդ է...

## ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

### ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՏԵՒԱՆՔՆԵՐ

#### ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍԸ

Յուսալքութեան գիրկը ինկած մէկը կը գրէ. «Որեւէ տեղ հանգիստ չունիմ: Կ'աղօթեմ Աստուծոյ, որ ներէ իմ մեղքերս, եւ ամէն օր ես ինծի կ'ըսեմ՝ որ առանց Տիրոջ հետ հաշտուելու կարելի չէ քնանալ: Քանի՛ անքուն, արցունքոտ գիշերներ անցուցած եմ: Կը զգամ, անանկ վիճակի հասեր եմ, որ նոյնիսկ չեմ կրնար մտածել: Կ'ուզեմ հաւատալ, որ Փրկիչը ներած է մեղքերս: Բայց որոշ բեռի մը անտանելի տիրապետութիւնը կը զգամ իմ վրաս: Յաճախ կը մտածեմ.- Գոնէ մէկը գտնուէր, որուն հետ կարենայի մտածումներս բաժնել: Զեռքերուս ու ոտքերուս վրայ մեծ ծանրութիւն կը զգամ, սակայն սարսափելի մտածումները աւելի եւ աւելի կը համակեն զիս: Այն օրէն սկսեալ, որ կ'աշխատիմ Աստուծոյ մօտ ըլլալ, չար մտածումները աւելի աներես դարձեր են: Զուրիքովէն անցած ատենս ձայն մը կը լսեմ. «Զուր նետուէ՛ ամէն ինչ կը վերջանայ եւ կը խաղաղիս»: Դանակ կը տեսնեմ՝ եւ դարձեալ կարծես մէկը իմ մտածումներս կը բռնադատէ, որ կոկորդս կտրեմ: Այսպէս Սատանան զիս կը հետապնդէ գիշեր ցերեկ: Երբ Սաղմոսները կը լսեմ՝ լալու փափաք մը կ'արթննայ մէջս, եւ այնպէս կը թուի՝ թէ ինծի համար անկարելի է ուրախ ըլլալ, թէ ես անձնասպան պէտք է ըլլամ որ խաղաղութիւն գտնեմ»:

#### ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -  
Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



## ԱԶԳԱՅԻՆ ԱՈԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 3, ՅՈՒՆԻՍ 2012

ԹԻԻ 23

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՅՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 4.25-30**

### ՅԻՇԱՏԱԿ ԵՂԻԱ ՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ

Զեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեքուկէս տարի երկիրնքը չանճրեւեց եւ ամբողջ երկիրն մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ոեւէ մէկուն չղրկուեցաւ, այլ զրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփթա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով ասորի մը:

Այս ակնարկութիւնները լսելով՝ ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով զայն տարին մինչեւ կատարը այն լերան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

### ՔԱԼԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՏՏ

Աստուածաշունչը կը հաստատէ թէ «Նոյ Աստուծոյ հետ քայեց» (ԾՆ 6.9): Աստուծոյ հետ քայել, կը նշանակէ Աստուծոյ հետ ապրիլ եւ անոր ընկեր դառնալ: «Աստուծոյ հետ քայեց» բացատրութիւնը ակնարկութիւն է այն մտերմութեան եւ մօտիկութեան որ Նոյ ունէր Աստուծոյ հետ: Աստուծոյ հետ քայելը՝ Աստուծոյ հանդէպ կատարեալ հնազանդութիւն ցուցաբերել է: Դիւրին չէր Նոյին համար քայլել Աստուծոյ հետ եւ վկայել անոր համար, երբ իր շրջապատի բոլոր մարդիկը կը քայէին ընդդէմ Աստուծոյ: Մեզմէ քանինե՞ր կրնան վկայել Քրիստոսի համար երբ շրջապատուած են գժրիստոս ծաղրող մարդոցմով: Ծաղրածու այս աշխարհին մէջ, քրիստոնեայ մարդը պէտք է համարձակութիւնը ունենայ ոտքի կանգնելու Յիսուսի փառքին համար:

## ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷ

Եղիա մարգարէն, Երրայեցի ժողովուրդին ամենապիղծ թագաւորին՝ Աքապի օրերուն, իբրեւ Աստուծոյ հաւատարիմ մարգարէ, բոլորին կոչ կ'ուղղէր դարձի գալու կենդանի Աստուծոյ: Ան մերժուած էր իր քաղաքացիներէն: Հակառակ այս վիճակին, ան չէր դադարել իր նուիրական առաքելութենէն: Մարգարէին գլխաւոր մտահոգութիւնն էր մարդոց հոգիներէն փարատել անհաւատարմութեան մշուշը, որպէսզի հաւատքի լուսաշող ճանապարհէն ընթանան եւ առաջնորդուին դէպի արդարութիւն եւ աստուածապաշտութիւն:

Եղիա մարգարէն Տիրոջ տնօրինումով կը դրկուի Սամարիա՝ մոլորած ժողովուրդին մէջ հաստատելու գԱստուած պաշտելու անհրաժեշտութիւնը, որ երաշխիքն է փրկութեան: Աստուած Եղիա մարգարէին միջոցով ժողովուրդին մեծամեծ նշաններ ցոյց կու տար:

Տիրոջ հրամանով, Եղիա մարգարէն ժողովուրդը իր շուրջ հաւաքելով կը բարձրանայ Կարմեղոս լեռ, Բահաղի մարգարէներուն եւ ամբողջ ժողովուրդին ցոյց տալու, թէ Տէրն է միակ Աստուածը: Տասներկու քար կը հաւաքէ, Յակոբի որդիներու ցեղերուն թիւով, եւ անոնցմով գոհասեղան կը սարքէ, վրան փայտ կը դնէ եւ հորթ կը գոհէ: Յետոյ կը հրամայէ գոհասեղանին վրայ. «Չորս սափոր ջուրով լեցուցէ՛ք, ու թափեցէ՛ք ողջակէզին վրայ եւ փայտերուն վրայ» (Գ. Թագաւորաց 18.34), ապա կը սկսի աղօթել:

Մարգարէին աղօթքէն ետք երկինքէն կրակ կ'իջնէ, որ ողջակէզը, փայտերը, քարերն ու հողը կ'այրէ եւ ջուրն ալ կը սպառէ: Ժողովուրդը այս երեւոյթը տեսնելով, երեսի վրայ կ'իյնայ ու կ'ըսէ. «Եհովան է միակ Աստուածը» (Գ. Թագաւորաց 18.39):

Աւետարանին մէջ կը կարդանք, թէ Քրիստոսի այլակերպութեան ժամանակ Մովսէսն ու Եղիան կ'երեւին Յիսուսի:

Եղիա մարգարէն, իր կեանքի ակարտին, իրեն յաջորդ՝ Եղիսէ մարգարէի հետ Յորդանան գետին մօտ կը կանգնի եւ ահա հրեղէն կառք մը ձիերով գինք կ'առաջնորդեն դէպի երկինք: Ան իր վերարկուն կը ձգէ Եղիսէին, որպէսզի շարունակէ կատարել մարգարէութեան սուրբ պաշտօնը (Գ. Թագաւորաց 2):

Եղիա մարգարէի աստուածահաճոյ կեանքը թող օրինակ դառնայ մեզի, որպէսզի մենք եւս կարենանք հաստատ քայլերով եւ ամրակուռ հաւատքով ուղղուիլ դէպի Քրիստոս, որ իր լոյսով կը պայծառակերպէ մեր հոգիները, եւ կը խոստանայ բոլոր արդարները լուսաւորել ու արժանացնել երկինքի արքայութեան (Մատթէոս 13.43):

Ամէն մարդ թող արագ ըլլայ լսելու մէջ եւ ծանր՝ խօսելու ու բարկանալու մէջ, որովհետեւ մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը չի կատարեր: (Յակոբոս 1.19-20)

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ ՆԱՄԱԿ ՓՈԽ ԳՐԱՄԻ ԵՒ ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ

Ընչասիրութեան մորտթիւնը շատ վատ է, իսկ դրամին համար տոկոս ստանալը՝ շատ ակեղի վատ, եւ մշտապէս անարգուած եւ անիծուած է թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ: Անոնք որ տոկոս կը պահանջեն, պիտի պատժուին, որովհետեւ, հակառակ Աստուծոյ պատուէրին, իրենց դրամը փոխ կու տան եւ գայն տոկոսով ետ կը պահանջեն, անամօթաբար աղքատներուն մարմինը կ'ուտեն եւ անգութ կերպով անոնց արիւնը կը խմեն եւ ականջ չեն տար Եզեկիէլ հոգեյից Մարգարէին, որ տոկոսով փոխ տրուած դրամը մեծ չարիքներու կարգին կը դասէ, [փոխ տուողներ] իրենց պղծութեամբ կռապաշտներու հետ կը բաղդատէ ըսելով որ Իսրայէլի տունը կուռքերով պղծուեցաւ, որովհետեւ տոկոս պահանջեց (Եզեկ. 18:13): Մովսէս կ'ըսէ. «Ընկերոջդ տոկոսով դրամ փոխ մի՛ տար» (Բ. Օր. 23:20) որովհետեւ այդ մէկը Աստուծոյ առջեւ անօրէնութիւն է. ան որ տոկոս կը պահանջէ [Աստուած] երկնային խորաններէն դուրս կը դնէ գինք: Իսկ ան, որ իր դրամը տոկոսի չի տար եւ իր իրաւունքներու վրայ կաշառք չի պահանջեր, անիկա յաւիտեան պիտի չսասանի: Ուրիշ մարգարէ մը կ'ըսէ. «Ան որ լեռներու վրայ գոհուածը չկերու ու գրաւը պարտապանին դարձուց եւ տոկոս չպահանջեց, անիկա արդար է եւ ապրելով պիտի ապրի, իսկ ան որ տոկոս կը պահանջէ, Աստուծոյ պատուիրաններուն եւ Ս. Հոգւոյ հրամաններուն կ'ընդդիմանայ եւ ատոր անօրէնութիւններու կը յանձնուի, որոնք արգիւրուած են Ս. Հոգւոյ հրամաններով» (Եզեկ.18:1-13)

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ԿՈՅՍԵՐ

Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ վասն հաւատքի նահատակութեան օրինակները անպակաս են:

Այս օրինակներէն մէկն է՝ Հոնիփսիմէ անունով կոյս մը որ յաջողեցաւ հաւատքի ոյժով դիմադրել եւ յաղթել իր օրուան թագաւորին՝ Տրդատին:

Ս. Հոնիփսիմէ քրիստոնեայ հաւատացեալ մըն էր, որ Հոռմի մէջ քրիստոնեաներուն դէմ կատարուած հալածանքներէն փախած էր ու կ'ապրէր Գայիանէ կոյսի գլխաւորած հաւատացեալ կոյսերու խումբին մէջ: Այս խմբակը հաստատուած էր Հնձաններ կոչուած տեղի մը մէջ, Վաղարշապատի շրջակայքը:

Հայաստանի այդ ժամանակաշրջանի թագաւորը՝ Տրդատ, տակաւին հեթանոս էր եւ ուզեց ամուսնանալ Հոնիփսիմէի հետ: Ան անշուշտ մերժեց, որովհետեւ չէր ուզեր կին ըլլալ կոպաշտ թագաւորին: Հոնիփսիմէի ժխտական կեցուածքին որպէս հետեւանք, թագաւորը սպաննել տուաւ ոչ միայն Հոնիփսիմէն, այլ նաեւ անոր պետը՝ Գայիանէն եւ իր ընկերները:

Եւ այսպէս է որ նահատակուած այս 37 կոյսերը կոչուեցան Հոնիփսիմեան կոյսեր ու անոնք կը յիշատակուին մինչեւ այսօր մեր եկեղեցիէն ներս:

**ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ  
ԳԻՐՔԵՆ  
18.29-46**

Կէսօրը անցաւ եւ Բահադի մարգա-  
րէները շարունակեցին իրենց ցնորական  
կանչուրոտուէր մինչեւ երեկոյեան գոհր  
մատուցանելու ժամը. բայց ո՛չ մէկ ձայն:  
Այն ատեն Եղիա Թեաքացի ըսաւ  
գարշելի այդ կուռֆերու մարգարէնե-  
րուն.

– Հեռացէ՛ք այլեւս, հիմա ես իմ ողջա-  
կէզս պիտի մատուցանեմ:

Եւ անոնք հեռու գացին:  
Եղիա ժողովուրդին դառնալով ըսաւ.  
«Ինծի մօտեցէ՛ք»:

Եւ ամբողջ ժողովուրդը անոր մօտե-  
ցան:

Եղիա Տիրոջ կործանած սեղանը վերա-  
կանգնելու համար տասներկու քարեր  
առաւ, Յակոբի որդիներէն սերած ցեղե-  
րուն թիւին համաձայն, որուն Աստուած  
իօսած էր ըսելով. «Իսրայէլ պիտի կո-  
չուիս», այդ քարերով սեղան մը կանգնեց  
Տիրոջ անունին, եւ անոր շուրջը փոս մը  
փորեց, թիթեղ մը սերմնցու տանելու  
խորութեամբ: Ապա փայտերը սեղանին  
վրայ շարեց, գուարակը կտոր-կտոր ընե-  
լով փայտերուն վրայ դիզեց եւ  
հրամայեց.

– Չորս սափոր ջուր բերէ՛ք եւ ող-  
ջակէզին ու փայտերուն վրայ թափեցէ՛ք:

Ապա ըսաւ. «Կրկնեցէ՛ք նոյնը»:

Եւ անոնք նոյն ձևով կրկնեցին: «Եր-  
րորդ անգամ ըլլալով կրկնեցէ՛ք նոյնը»,  
ըսաւ ան, եւ երրորդ անգամ մըն ալ այն-  
պէս ըրին: Զուրը սեղանին շուրջ հոսե-  
ցաւ եւ լեցուց փոսը:

Երբ երեկոյեան գոհր մատուցանելու  
ժամը հասաւ, Եղիա մարգարէ սեղանին  
մօտեցաւ եւ աղօթեց աղաղակելով.

– Ո՛վ Տէր, Աբրահամի, Իսահակի եւ  
Յակոբի Աստուածը, ցոյց տու՛ր այսօր  
թէ դո՛ւն ես Իսրայէլի Աստուածը եւ ես՝  
քու ծառայ եւ, թէ քեզի համար ըրի այս  
բոլորը: Լսէ՛ ինծի, Տէ՛ր, պատասխանէ՛  
ինծի կրակով, որպէսզի այս ժողովուրդը  
գիտնայ՝ թէ դո՛ւն ես Աստուածը, ո՛վ  
Տէր, եւ թէ դո՛ւն ես որ ետ քեզի կը  
դարձնես իրենց սիրտը:

**ՅԱԿՈՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ  
5.16-20**

Ձեր մեղքերը իրարու խոս-  
տովանցեցէ՛ք եւ իրարու համար  
աղօթեց՛ք, որպէսզի բժշկուիք.  
որովիտես արդարի մը աղօթքը  
ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ:  
Եղիա մեզի նման կիրքերու են-  
թակայ մարդ էր. բայց երբ ա-  
ղօթեց որ անձրեւ չգայ, երե-  
քուկէս տարի չանձրեւեց երկրի  
վրայ: Ապա դարձեալ աղօթեց եւ  
երկինքը անձրեւ տեղաց ու եր-  
կիրը բերքը տուաւ:

Եղբայրներս, երբ ձեզմէ ոեւէ մէկը  
ճշմարտութեան ուղիէն մոլորի եւ  
ուրիշ մը յաջողի զայն վերադար-  
ձնել, գիտցէ՛ք թէ մեղաւորը իր  
մոլար ճամբէն դարձնողը թէ ա-  
նոր հոգին մահուանէ կը փրկէ եւ  
թէ իր բազմաթիւ մեղքերուն թո-  
ղութիւն կը գտնէ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԱՍՏՈՒՄԾԱՀՈՒՄՆԻՆ: ՄԻՇՏ  
ԱՍՏՈՒՄԾԱՀՈՒՄՆԻՆՉ ԿԱՐԴԱՆՔ:**